## ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

## ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԿԱՏԱՐԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1. **Գործուղման մասնակցի անունը, ազգանունը.**
   Լևոն Տեր-Սիմոնյան
2. **Զբաղեցրած պաշտոնը.**
3. «Արգելոցապարկային համալիր» ՊՈԱԿ տնօրենի պարտականությունները կատարող
4. **Գործուղման վայրը և ժամկետները.**

Վրաստանի հանրապետություն, ք. Բորժոմի նոյեմբերի 6-9

5. **Հրավիրող կողմը (առկայության դեպքում).**

6. **Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը.)**

Մասնակցություն Եվրասիայում և Արևելյան Եվրոպայում վայրի բնության պաշտպանության և ազգային պարկերի առաջին միջազգային գագաթնաժողովին, որը կարևոր հարթակ էր վայրի բնության պահպանության վերաբերյալ կարևոր հիմնահարցերի քննարկման համար, այդ թվում՝ պահպանվող տարածքների կառավարման, կենսաբազմազանության պահպանման, անտառների, էկոզբոսաշրջության ոլորտում քաղաքականության մշակմանն առնչվող առանցքային հարցերի վերաբերյալ:
Գագաթնաժողովի նպատակն է բարձրացնել իրազեկվածությունը, կիսվել փորձով և ուսումնասիրել պահպանվող տարածքների ընդհանուր քաղաքականության խնդիրները:

7. **Քննարկված թեմաները (հարցերը).**

- Պահպանվող տարածքների կառավարման մոդելների, հաջողված փորձերի, կառավարման խնդիրների ներկայացում,
- Պահպանվող տարածքների պահպանության ոլորտում իրականացված ռազմավարական քաղաքականությունների, պահպանության ոլորտում հաջողված փորձերի (Սմարթ կառավարում) և մոդելների ներկայացում,
- Պահպանվող տարածքներում էկոզբոսաշրջության զարգացում, մշակված էկոերթուղիների ներկայացում,
- Միջազգային և դոնոր կազմակերպությունների ներկայացուցիչների կողմից կենսաբազմազանության պաշտպանության և պահպանության ապահովման նախաձեռնությունների և գործողությունների շուրջ կապի ամրապնդմանն ուղղված ջանքերի և ռազմավարության ներկայացում,

8. **Հանդիպումները, ելույթները.**

Հանդիպման առաջին օրը ներկայացվել է միջազգային և դոնոր կազմակերպությունների կողմից պահպանվող տարածքներին տրամադրված

ֆինանսական և կառավարման ոլորտում խորհրդակցական աջակցության մասին զեկույցներ:

Տեղի է ունեցել «World cafe» ձևաչափով հանդիպում-քննարկումներ, մասնավորապես՝ կառավարման ոլորտում առաջնահերթ խնդիրների վերհանում, կադրային ճիշտ քաղաքականության վարում, հաջորդիվ մասնակից երկրները ներկայացրել են նաև տաղավար-ցուցադրություններ՝ պահպանվող տարածքների վերաբերյալ ինֆորմացիոն բաղադրիչներով:

9. **Հանդիպումների ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.**

Հանդիպումների ընթացքում կարևորվեց պահպանվող տարածքների կայուն կառավարման ոլորտում կիրառվող փորձի փոխանակումը, կառավարման ադմինիստրատիվ և արդյունքային մոդելների կիրառումը:

10. **Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.**

Քննարկում-հանդիպումների ընթացքում ընդգծվեց պահպանվող տարածքներում կիրառելի լավագույն փորձերը և գործող լուծումներն՝ ուղղված պահպանվող տարածքներում կառավարման ոլորտում առկա խնդիրներին և խոչնդոտներին:

Կարևորվեց արդյունավետ քաղաքականությունները և միջոցառումները, որոնք իրականացվում են գլոբալ տեսանկյունից՝ ուղղված պահպանվող տարածքների կայուն, արդյունավետ կառավարմանը, կենսաբազմազանության պահպանությանը և պաշտպանությանը:

*Գործուղվող՝* Լևոն Տեր-Սիմոնյան